

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին**

Ամփոփվել են ՀՀ մարզերում տեսչական ստուգումների անցկացման ժամանակացույցի համաձայն 2013թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Արարատի մարզում իրականացված ստուգումների արդյունքները:

Ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների համար կայացվել է տեսչության պետի որոշումը՝ Արարատի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին, հողային պետական տեսչության պետին կարգապահական տույժի, իսկ Արտաշատ, Մասիս և Այնթապ համայնքների ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Մարզում արձանագրված որոշ խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով նյութերն ուղարկվել են Արարատի մարզային դատախազություն:

Ըստ հաստատված ժամանակացույցի 2014 թվականի ապրիլ-հունիս ամիսների ընթացքում ստուգումներ են իրականացվել Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

**ՀՀ Արմավիրի մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Համաձայն մարզպետի 10.06.2014թ. N 01/11/1944-14 գրության, կայացվել են որոշումներ 5 համայնքների ղեկավարներին ընդհանուր **750000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Գեղարքունիքի մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 4 համայնքներում:

Ուսումնասիրության արդյունքում կազմված ակտը ներկայացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին, որի արդյունքում երեք համայնքների համապատասխան պաշտոնատար անձիք ենթարկվել են վարչական պատասխանատվության (ընդհանուր **400.000** ՀՀ դրամի չափով):

2013թ. ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանումում կադաստրային հերթապահ քարտեզների վարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են կոմիտեի նախագահին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 22 ապրիլի 2014թ. թիվ 112-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի համակարգում գտնվող «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ, որի արդյունքում կազմված տեղեկանքը ներկայացվել է կոմիտեի նախագահին և Երևանի քաղաքապետին:

Սույն թվականի 2-րդ եռամսյակում տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ, որի արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 399-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն, սույն թվականի 2-րդ եռամսյակում տեսչության կողմից կոմիտեի աշխատակազմի՝ Արմավիրի, Գեղարքունիքի և

Արարատի մարզային ստորամաժանումներում իրականացվել են հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ: Արմավիրի և Արարատի մարզային ստորաբաժանումներում իրականացրած ստուգումների ժամանակ հայտնաբերվել են մի շարք թերություններ, արդյունքում կազմված տեղեկանքները ներկայացվել են մարզային ստորաբաժանումների ղեկավարների քննարկմանը: Ստորաբաժանումների ղեկավարները գրություններով հայտնել են, որ տեղեկանքներում արձանագրված թերությունները իրենց կողմից ընդունվել են, արձանագրված թերությունները ամբողջությամբ վերացվել են և բոլոր աշխատակիցների ուշադրությունն է հրավիրվել դրանք հետագայում բացառելու համար:

Իրականացված ստուգումների արդյունքում նշանակված վարչական տույժերից պետական բյուջե է մուտքագրվել **1850000** դրամ:

Ներկայումս տեսչությունը ՀՀ կոտայքի մարզում իրականացնում է ըստ հաստատված ժամանակացույցի տեսչական ստուգման աշխատանքներ: